Հավելված 5

«ԷԱՃԱՊՁԲ ՀՊՀՖ-ԷԱՃԾՁԲ-23/11 »* ծածկագրով

Էլեկտրոնային աճուրդի հրավերի

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ**

**ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

**ՀՊՀՖ-ԷԱՃԾՁԲ-23/11-1**

ք. Երևան

03/ Տարեթվի /2023թ

« ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖՈՆԴ »-ը ի դեմս Դավիթ Փափազյան ի, որը գործում է « ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖՈՆԴ »-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Պատվիրատու», մի կողմից, և « Սիդա Հարությունյան ԱՁ »-ը, ի դեմս տնօրեն Սիդա Հարությունյան ի, որը գործում է « Սիդա Հարությունյան ԱՁ »-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Կատարող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է գրավոր թարգմանության ծառայություններ ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելված ով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրին համախատասխան և N 2 հավելվածով սահմանված ծառայության մատուցման ժամանակացույցով նախատեսված ժամկետներով

2. **ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N1 և/կամ N 2 հավելվածին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, **եթե՝**

**ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 և/կամ N 2 հավելվածով սահմանված պահանջներին,**

**բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:**

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

**2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:**

**2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:**

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

**2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում**

Scanned with CamScanner

նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում շինարարական աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:6

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 2195000.00 AMD(երկու միլիոն հարյուր ինսունհինգ հազար դրամ ) ՀՀ դրամ:7 17

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

Scanned with CamScanner

4.2 Պատվիրատուն մատուցված ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի *0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական)* տոկոսի չափով:921Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի *0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական)* տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 *(զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական)* տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք **անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:**

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Պատվիրատուի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

*Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը* [5]:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ

Scanned with CamScanner

պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

**7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:**

**Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:**

**Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:**

11[6]

**7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5** օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ **պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:**

**7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի** միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

**7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:**

**7.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1**

Scanned with CamScanner

հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ծառայության մատուցման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

13[2]

-

-

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| | |
|---|---|
| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** | **ԿԱՏԱՐՈՂ** |
| **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖՈՆԴ** | **Աիդա Հարությունյան ԱՁ** |
| **ք.Երևան,Մելիք Ադամյան 2/2 փող.** | **Կոտայքի մարզ Եղվարդ Կնունյանց 1** |
| **«Յունիբանկ» ՓԲԸ** | **Այ դի Բանկ** |
| **24149001211900** | **11807043664700** |
| **02697868** | **43233834** |
| -------------------------------- | -------------------------------- |
| **/ստորագրություն/** | **/ստորագրություն/** |
| **Կ.Տ** | **Կ.Տ** |

Digitally signed by ALEKSANYAN LIANNA 6803890619

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

*17[6]Կիրառվում է, եթե կնքվում էնախագծայինփաստաթղթերիքաղաքաշինականփորձաքննության ծառայություններիմատուցմանպայմանագիր*

*[17]Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

*[8]Կատարողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիքպայմանագրում կանխավճարը սահմանվում է Պատվիրատուիև Կատարողիմիջև համաձայնեցված չափով:Եթեպայմանագրովչինախատեսվումկանխավճարիհատկացում, ապասույն կետըհանվումէնախագծից:*

*[9]Եթեպայմանագիրըկնքվելէ«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապատուգանքըհաշվարկվումէայնհամաձայնագրիգնինկատմամբ, որի շրջանակումարձանագրվելէստանձնվածպարտավորությունների չկատարմանկամոչպատշաճկատարմանհանգամանքը:*

*Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

[10]Պետականբյուջեիմիջոցներիհաշվինպարտավորություններչառաջացնող գնումներիդեպքումսույննախադասությունըպայմանագրիցհանվումէ:

[11] Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:

[12]Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:

[13]Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները» բառերը փոխարինելով «և» բառով:Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

Հավելված N 1
03/ 03 /2023թ. կնքված
ՀՊՀՖ-ԷԱՃԾՁԲ-23/11 ծածկագրով պայմանագրի

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ**

ՀՀ դրամ

| Ծառայության | | | |
|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | 79531100/1 | Գրավոր թարգմանություն հայերեն-անգլերեն-հայերեն | 1. Թարգմանված նյութերը պետք է տրամադրվեն՝ պատվիրատուի կողմից նախապես սահմանված ժամկետներում մինչև 5 աշխատանքային օրվա ընթացքում), մեկ օրինակից, էլեկտրոնային եղանակով: 2. Թարգմանչական ծառայությունը պետք է համապատասխանի ՀՍՏ ԵՆ 15038-2007 «Թարգմանչական ծառայություններ. Ծառայության պահանջներ» միջազգային ստանդարտին՝ ընդունված «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից: Իրավական, տնտեսական և ֆինանսական տերմինները պետք է թարգմանվեն մասնագիտացված թարգմանչի կողմից՝ երկիմաստություններից խուսափելու նպատակով: 3. Գրավոր թարգմանության մեկ էջը պետք է բաղկացած լինի 1800 նիշից (բացատը նիշ չի համարվում), եթե թարգմանված նյութը կազմում է մինչև 1800 |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Նիշ, ապա հաշվարկվում է որպես մեկ էջ: Թարգմանված նյութը ներկայացվում է A4 ֆորմատով, տառերը՝ 12 շրիֆտով: Էջերի լուսանցքները՝ վերևից 20 մմ, ներքևից 20 մմ, աջից 20 մմ և ձախից 20 մմ: Միջտողային միջակայքը՝ 1.5: 4. Թարգմանության ենթակա քանակ՝ մինչև 150 էջ: Գնային առաջարկը պետք է ներկայացվի 150 էջի հաշվարկով: *Ծանուցում բոլոր չափաբաժինների մասնակիցների համար. • Թարգմանությունները պետք է իրականացվեն տնտեսական/ֆինանսական/իրավաբանական ոլորտում մասնագիտացած հմուտ թարգմանիչների կողմից, որոնք տիրապետում են ոլորտային տերմինաբանությանը և ունեն համապատասխան փորձ: • Մասնակցի թիմը պետք է ունենա համապատասխան աշխատակազմ պատվերը ժամանակին, որակով և սահմանված պահանջներին բավարարելու համար: • Հաղորդակցության համար Մասնակիցը Պատվիրատուին պետք է տրամադրի առնվազն 2 մշտապես հասանելի հեռախոսահամար և էլ. փոստի գործող հասցե: Կցված է b586e79d.doc |
| 2 | 79531100/2 | Գրավոր թարգմանություն հայերեն-անգլերեն-հայերեն /հրատապ/ | 1. Թարգմանված նյութերը պետք է տրամադրվեն հետևյալ ժամկետում - մեկ թարգմանվելիք մինչև 30 էջ նյութի համար - 1 աշխատանքային օրվա ընթացքում, մեկ օրինակից, էլեկտրոնային եղանակով, 2 Թարգմանչական ծառայությունը պետք է համապատասխանի ՀՍՏ ԵՆ 15038-2007 «Թարգմանչական ծառայություններ. Ծառայության պահանջներ» միջազգային ստանդարտին՝ ընդունված «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից: Իրավական, տնտեսական և ֆինանսական տերմինները պետք է թարգմանվեն մասնագիտացված թարգմանչի կողմից՝ երկիմաստություններից խուսափելու նպատակով: 3. Գրավոր թարգմանության մեկ էջը պետք է բաղկացած լինի 1800 նիշից (բացատը նիշ չի |

| | | | |
|---|---|---|---|
| | | | համարվում), եթե թարգմանված նյութը կազմում է մինչև 1800 նիշ, ապա հաշվարկվում է որպես մեկ էջ: Թարգմանված նյութը ներկայացվում է A4 ֆորմատով, տառերը՝ 12 շրիֆտով: Էջերի լուսանցքները՝ վերևից 20 մմ, ներքևից 20 մմ, աջից 20 մմ և ձախից 20 մմ: Միջտողային միջակայքը՝ 1.5: 4. Թարգմանության ենթակա քանակ՝ 100 էջ: Գնային առաջարկը պետք է ներկայացվի 100 էջի հաշվարկով: *Ծանուցում բոլոր չափաբաժինների մասնակիցների համար. • Թարգմանությունները պետք է իրականացվեն տնտեսական/ֆինանսական/իրավաբանական ոլորտում մասնագիտացած հմուտ թարգմանիչների կողմից, որոնք տիրապետում են ոլորտային տերմինաբանությանը և ունեն համապատասխան փորձ: • Մասնակցի թիմը պետք է ունենա համապատասխան աշխատակազմ պատվերը ժամանակին, որակով և սահմանված պահանջներին բավարարելու համար: • Հաղորդակցության համար Մասնակիցը Պատվիրատուին պետք է տրամադրի առնվազն 2 մշտապես հասանելի հեռախոսահամար և էլ. փոստի գործող հասցե: Կցված է 52d7d6d6.doc |
| 3 | 79531100/3 | Գրավոր թարգմանություն հայերեն-ֆրանսերեն-հայերեն | 1. Թարգմանված նյութերը պետք է տրամադրվեն՝ պատվիրատուի կողմից նախապես սահմանված ժամկետներում մինչև 5 աշխատանքային օրվա ընթացքում), մեկ օրինակից, էլեկտրոնային եղանակով: 2. Թարգմանչական ծառայությունը պետք է համապատասխանի ՀՍՏ ԵՆ 15038-2007 «Թարգմանչական ծառայություններ. Ծառայության պահանջներ» միջազգային ստանդարտին՝ ընդունված «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից: Իրավական, տնտեսական և ֆինանսական տերմինները պետք է թարգմանվեն մասնագիտացված թարգմանչի կողմից՝ երկիմաստություններից խուսափելու նպատակով: 3. Գրավոր թարգմանության մեկ էջը |

Scanned with CamScanner

| | | | |
|---|---|---|---|
| | | | պետք է բաղկացած լինի 1800 նիշից (բացատը նիշ չի համարվում), եթե թարգմանված նյութը կազմում է մինչև 1800 նիշ, ապա հաշվարկվում է որպես մեկ էջ: Թարգմանված նյութը ներկայացվում է A4 ֆորմատով, տառերը՝ 12 շրիֆտով: էջերի լուսանցքները՝ վերևից 20 մմ, ներքևից 20 մմ, աջից 20 մմ և ձախից 20 մմ: Միջտողային միջակայքը՝ 1.5: 4. Թարգմանության ենթակա քանակ՝ մինչև 150 էջ: Գնային առաջարկը պետք է ներկայացվի 150 էջի հաշվարկով: *Ծանուցում բոլոր չափաբաժինների մասնակիցների համար. • Թարգմանությունները պետք է իրականացվեն տնտեսական/ֆինանսական/իրավաբանական ոլորտում մասնագիտացած հմուտ թարգմանիչների կողմից, որոնք տիրապետում են ոլորտային տերմինաբանությանը և ունեն համապատասխան փորձ: • Մասնակցի թիմը պետք է ունենա համապատասխան աշխատակազմ պատվերը ժամանակին, որակով և սահմանված պահանջներին բավարարելու համար: • Հաղորդակցության համար Մասնակիցը Պատվիրատուին պետք է տրամադրի առնվազն 2 մշտապես հասանելի հեռախոսահամար և էլ. փոստի գործող հասցե: Կցված է 6c1048af.doc |
| 4 | 79531100/4 | Գրավոր թարգմանություն հայերեն-ֆրանսերեն-հայերեն /հրատապ/ | 1. Թարգմանված նյութերը պետք է տրամադրվեն հետևյալ ժամկետում - մեկ թարգմանվելիք մինչև 30 էջ նյութի համար - 1 աշխատանքային օրվա ընթացքում, մեկ օրինակից, էլեկտրոնային եղանակով. 2 Թարգմանչական ծառայությունը պետք է համապատասխանի ՀՍՏ ԵՆ 15038-2007 «Թարգմանչական ծառայություններ. Ծառայության պահանջներ» միջազգային ստանդարտին՝ ընդունված «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից: Իրավական, տնտեսական և ֆինանսական տերմինները պետք է թարգմանվեն մասնագիտացված թարգմանչի կողմից՝ երկիմաստություններից |

| | | | |
|---|---|---|---|
| | | | խուսափելու նպատակով: 3. Գրավոր թարգմանության մեկ էջը պետք է բաղկացած լինի 1800 նիշից (բացատը նիշ չի համարվում), եթե թարգմանված նյութը կազմում է մինչև 1800 նիշ, ապա հաշվարկվում է որպես մեկ էջ: Թարգմանված նյութը ներկայացվում է A4 ֆորմատով, տառերը՝ 12 շրիֆտով: էջերի լուսանցքները՝ վերևից 20 մմ, ներքևից 20 մմ, աջից 20 մմ և ձախից 20 մմ: Միջտողային միջակայքը՝ 1.5: 4. Թարգմանության ենթակա քանակ՝ 100 էջ: Գնային առաջարկը պետք է ներկայացվի 100 էջի հաշվարկով: *Ծանուցում բոլոր չափաբաժինների մասնակիցների համար. • Թարգմանությունները պետք է իրականացվեն տնտեսական/ֆինանսական/իրավաբանական ոլորտում մասնագիտացած հմուտ թարգմանիչների կողմից, որոնք տիրապետում են ոլորտային տերմինաբանությանը և ունեն համապատասխան փորձ: • Մասնակցի թիմը պետք է ունենա համապատասխան աշխատակազմ պատվերը ժամանակին, որակով և սահմանված պահանջներին բավարարելու համար: • Հաղորդակցության համար Մասնակիցը Պատվիրատուին պետք է տրամադրի առնվազն 2 մշտապես հասանելի հեռախոսահամար և էլ. փոստի գործող հասցե: Կցված է 55dbbb71.doc |
| 5 | 79531100/5 | Գրավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն | 1. Թարգմանված նյութերը պետք է տրամադրվեն՝ պատվիրատուի կողմից նախապես սահմանված ժամկետներում մինչև 5 աշխատանքային օրվա ընթացքում), մեկ օրինակից, էլեկտրոնային եղանակով: 2. Թարգմանչական ծառայությունը պետք է համապատասխանի ՀՍՏ ԵՆ 15038-2007 «Թարգմանչական ծառայություններ. Ծառայության պահանջներ» միջազգային ստանդարտին՝ ընդունված «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից: Իրավական, տնտեսական և ֆինանսական տերմինները պետք է թարգմանվեն |

Scanned with CamScanner

| | | | |
|---|---|---|---|
| | | | մասնագիտացված թարգմանչի կողմից՝ երկիմաստություններից խուսափելու նպատակով: 3. Գրավոր թարգմանության մեկ էջը պետք է բաղկացած լինի 1800 նիշից (բացատը նիշ չի համարվում), եթե թարգմանված նյութը կազմում է մինչև 1800 նիշ, ապա հաշվարկվում է որպես մեկ էջ: Թարգմանված նյութը ներկայացվում է A4 ֆորմատով, տառերը՝ 12 շրիֆտով: Էջերի լուսանցքները՝ վերևից 20 մմ, ներքևից 20 մմ, աջից 20 մմ և ձախից 20 մմ: Միջտողային միջակայքը՝ 1.5: 4. Թարգմանության ենթակա քանակ՝ մինչև 150 էջ: Գնային առաջարկը պետք է ներկայացվի 150 էջի հաշվարկով: *Ծանուցում բոլոր չափաբաժինների մասնակիցների համար • Թարգմանությունները պետք է իրականացվեն տնտեսական/ֆինանսական/իրավաբանական ոլորտում մասնագիտացած հմուտ թարգմանիչների կողմից, որոնք տիրապետում են ոլորտային տերմինաբանությանը և ունեն համապատասխան փորձ: • Մասնակցի թիմը պետք է ունենա համապատասխան աշխատակազմ պատվերը ժամանակին, որակով և սահմանված պահանջներին բավարարելու համար: • Հաղորդակցության համար Մասնակիցը Պատվիրատուին պետք է տրամադրի առնվազն 2 մշտապես հասանելի հեռախոսահամար և էլ. փոստի գործող հասցե: Կցված է 612de480.doc |
| 6 | 79531100/6 | Գրավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն /իրատապ/ | 1. Թարգմանված նյութերը պետք է տրամադրվեն հետևյալ ժամկետում՝ - մեկ թարգմանվելիք մինչև 30 էջ նյութի համար - 1 աշխատանքային օրվա ընթացքում, մեկ օրինակից, էլեկտրոնային եղանակով. 2. Թարգմանչական ծառայությունը պետք է համապատասխանի ՀՍՏ ԵՆ 15038-2007 «Թարգմանչական ծառայություններ. Ծառայության պահանջներ» միջազգային ստանդարտին՝ ընդունված «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից: Իրավական, տնտեսական |

| | | | |
|---|---|---|---|
| | | | և ֆինանսական տերմինները պետք է թարգմանվեն մասնագիտացված թարգմանչի կողմից՝ երկիմաստություններից խուսափելու նպատակով: 3. Գրավոր թարգմանության մեկ էջը պետք է բաղկացած լինի 1800 նիշից (բացատը նիշ չի համարվում), եթե թարգմանված նյութը կազմում է մինչև 1800 նիշ, ապա հաշվարկվում է որպես մեկ էջ: Թարգմանված նյութը ներկայացվում է A4 ֆորմատով, տառերը՝ 12 շրիֆտով: Էջերի լուսանցքները՝ վերևից 20 մմ, ներքևից 20 մմ, աջից 20 մմ և ձախից 20 մմ: Միջտողային միջակայքը՝ 1.5: 4. Թարգմանության ենթակա քանակ՝ 100 էջ: Գնային առաջարկը պետք է ներկայացվի 100 էջի հաշվարկով: *Ծանուցում բոլոր չափաբաժինների մասնակիցների համար • Թարգմանությունները պետք է իրականացվեն տնտեսական/ֆինանսական/իրավաբանական ոլորտում մասնագիտացած հմուտ թարգմանիչների կողմից, որոնք տիրապետում են ոլորտային տերմինաբանությանը և ունեն համապատասխան փորձ: • Մասնակցի թիմը պետք է ունենա համապատասխան աշխատակազմ պատվերը ժամանակին, որակով և սահմանված պահանջներին բավարարելու համար: • Հաղորդակցության համար Մասնակիցը Պատվիրատուին պետք է տրամադրի առնվազն 2 մշտապես հասանելի հեռախոսահամար և էլ. փոստի գործող հասցե: Կցված է f62371db.doc |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖՈՆԴ**

**Հասցե՝ ք.Երևան,Մելիք Ադամյան 2/2 փող.**

**«Յունիբանկ» ՓԲԸ**

**24149001211900**

**02697868**

**Դավիթ Փափազյան**

**ԿԱՏԱՐՈՂ**

**Սիդա Հարությունյան ԱՁ**

**Հասցե՝ Կոտայքի մարզ Եղվարդ Կնունյանց 1**

**Այ դի Բանկ**

**11807043664700**

**43233834**

**Սիդա Հարությունյան**

Scanned with CamScanner

Հավելված N 2
03.03/2023թ. կնքված
ՀՊՀՖ-ԷԱՃԾՁԲ-23/11 ծածկագրով պայմանագրի

**ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ***

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | |
|---|---|---|---|---|---|
| չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | հասցեն | ժամկետը** |
| դրամ | 345000.00 | 345000.00 | 1 | ՀՀ, ք. Երևան հանրապետության փ. 37 | Հայտ ներկայացվելուց հետո մինչև 5 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուի կողմից սահմանված ժամկետում, մինչև 27.12.2023թ. |
| դրամ | 350000.00 | 350000.00 | 1 | ՀՀ, ք. Երևան հանրապետության փ. 37 | Հայտ ներկայացվելուց հետո մինչև 5 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուի կողմից սահմանված ժամկետում, մինչև |

/ստորագրություն/
Կ.Տ

Digitally signed by ALEKSANYAN LIANNA

/ստորագրություն/
Կ.Տ

Scanned with CamScanner

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | 27.12.2023թ. |
| դրամ | 450000.00 | 450000.00 | 1 | ՀՀ, ք. Երևան հանրապետության փ. 37 | Հայտ ներկայացվելուց հետո մինչև 5 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուի կողմից սահմանված ժամկետում, մինչև 27.12.2023թ. |
| դրամ | 450000.00 | 450000.00 | 1 | ՀՀ, ք. Երևան հանրապետության փ. 37 | Հայտ ներկայացվելուց հետո մինչև 5 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուի կողմից սահմանված ժամկետում, մինչև 27.12.2023թ. |
| դրամ | 300000.00 | 300000.00 | 1 | ՀՀ, ք. Երևան հանրապետության փ. 37 | Հայտ ներկայացվելուց հետո մինչև 5 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուի կողմից սահմանված ժամկետում, մինչև 27.12.2023թ. |
| դրամ | 300000.00 | 300000.00 | 1 | ՀՀ, ք. Երևան | Հայտ |
| | | | | հանրապետության փ. 37 | ներկայացվելուց հետո մինչև 5 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուի կողմից սահմանված ժամկետում, մինչև 27.12.2023թ. |

* ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը.

** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած.

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖՈՆԴ | Սիդա Հարությունյան ԱՁ |
| Հասցե՝ ք.Երևան,Մելիք Ադամյան 2/2 փող. | Հասցե՝ Կոտայքի մարզ Եղվարդ Կնունյանց 1 |
| «Յունիբանկ» ФԲԸ | Այ դի Բանկ |
| 24149001211900 | 11807043664700 |
| 02697868 | 43233834 |
| Դավիթ Փափազյան | Սիդա Հարությունյան |
| ________ /ստորագրություն/ | ________ /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

Digitally signed by ALEKSANYAN LIANNA 6803890619
Date: 2023.03.02 21:39:16 GET

Scanned with CamScanner

Հավելված N 3
03.03 /2023թ. կնքված
ՀՊՀՖ-ԷԱՃԾՁԲ-23/11 ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | |
| | | | Հնվ. | Փտր. | Մրտ. | Ապր. | Մայ. | Հուն. | Հուլ. | Օգս. | Սեպ. | Հոկ. | Նոյ. | Դեկ. Ընդամենը |
| 1 | 79531100/1 | Գրավոր թարգմանություն հայերեն-անգլերեն-հայերեն | | 31050.00 | 62100 00 | 93150 00 | 12420 0.00 | 15525 0.00 | 18630 0.00 | 21735 0.00 | 24840 0.00 | 27945 0.00 | 31050 0.00 | 34500 0.00 / 34500 0.00 |
| 2 | 79531100/2 | Գրավոր թարգմանություն հայերեն-անգլերեն-հայերեն /հրատապ/ | | 31500 00 | 63000 00 | 94500 00 | 12600 0.00 | 15750 0.00 | 18900 0.00 | 22050 0.00 | 25200 0.00 | 28350 0.00 | 31500 0.00 | 35000 0.00 / 35000 0.00 |
| 3 | 79531100/3 | Գրավոր թարգմանություն հայերեն-ֆրանսերեն-հայերեն | | 40500 00 | 81000 00 | 12150 0.00 | 16200 0.00 | 20250 0.00 | 24300 0.00 | 28350 0.00 | 32400 0.00 | 36450 0.00 | 40500 0.00 | 45000 0.00 / 45000 0.00 |
| 4 | 79531100/4 | Գրավոր թարգմանություն հայերեն-ֆրանսերեն-հայերեն /հրատապ/ | | 40500 00 | 81000 00 | 12150 0.00 | 16200 0.00 | 20250 0.00 | 24300 0.00 | 28350 0.00 | 32400 0.00 | 36450 0.00 | 40500 0.00 | 45000 0.00 / 45000 0.00 |
| 5 | 79531100/5 | Գրավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն | | 27000 00 | 54000 00 | 81000 00 | 10800 0.00 | 13500 0.00 | 16200 0.00 | 18900 0.00 | 21600 0.00 | 24300 0.00 | 27000 0.00 | 30000 0.00 / 30000 0.00 |
| 6 | 79531100/6 | Գրավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն /հրատապ/ | | 27000 00 | 54000 00 | 81000 00 | 10800 0.00 | 13500 0.00 | 16200 0.00 | 18900 0.00 | 21600 0.00 | 24300 0.00 | 27000 0.00 | 30000 0.00 / 30000 0.00 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

** Իրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖՈՆԴ
Հասցե՝ ք.Երևան,Մելիք Ադամյան 2/2 փող.
«Յունիբանկ» ՓԲԸ
24149001211900
02697868
Դավիթ Փափազյան

________
/ստորագրություն/
Կ.Տ

Սիդա Հարությունյան ԱՁ
Հասցե՝ Կոտայքի մարզ Եղվարդ Կնունյանց 1
Այ դի Բանկ
11807043664700
43233834
Սիդա Հարությունյան

________
/ստորագրություն/
Կ.Տ

Digitally signed by ALEKSANYAN LIANNA 6803890619

Հավելված N 4
____/__________/2023թ. կնքված
ՀՊՀՖ-ԷԱՃԾՁԲ-23/11 ծածկագրով պայմանագրի

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ________ | ________ |
| ________ | ________ |
| գտնվելու վայրը ________ | գտնվելու վայրը ________ |
| հհ ________ | հհ ________ |
| հվհհ ________ | հվհհ ________ |

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**

**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

«___» «____» 20___ թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20__թ.

Պայմանագրի համարը՝ ՀՊՀՖ-ԷԱՃԾՁԲ-23/11-1

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «_____» «______________» 20___թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| 1 | Գրավոր թարգմանություն հայերեն-անգլերե | | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ն-հայերեն | | | | | | | |
| 2 | Գրավոր թարգմանություն հայերեն-անգլերեն-հայերեն /հրատապ/ | | | | | | | |
| 3 | Գրավոր թարգմանություն հայերեն-ֆրանսերեն-հայերեն | | | | | | | |
| 4 | Գրավոր թարգմանություն հայերեն-ֆրանսերեն-հայերեն /հրատապ/ | | | | | | | |
| 5 | Գրավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն | | | | | | | |
| 6 | Գրավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն /հրատապ/ | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ______________________ | ______________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Digitally signed by ALEKSANYAN LIANNA
6803890619

Հավելված N 4.1
___/__________/2023թ. կնքված
ՀՊՀՖ-ԷԱՃԾՁԲ-23/11 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N______

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖՈՆԴ -ի (այսուհետ՝ Պատվիրատու) և Արիդա Հարությունյան ԱՁ (այսուհետ՝ Կատարող) միջև 20__թ.__________________________ -ին կնքված N ՀՊՀՖ-ԷԱՃԾՁԲ-23/11-1 գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20__թ. ______________________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| Անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| Գրավոր թարգմանություն հայերեն-անգլերեն-հայերեն | դրամ | |
| Գրավոր թարգմանություն հայերեն-անգլերեն-հայերեն /հրատապ/ | դրամ | |
| Գրավոր թարգմանություն հայերեն-ֆրանսերեն-հայերեն | դրամ | |
| Գրավոր թարգմանություն հայերեն-ֆրանսերեն-հայերեն /հրատապ/ | դրամ | |
| Գրավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն | դրամ | |
| Գրավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն /հրատապ/ | դրամ | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

**ԿՈՂՄԵՐԸ**

| Հանձնեց | Ընդունեց |
|---|---|
| ______________________ | հայտը նախագծած ներկայացուցիչ՝ |

Scanned with CamScanner

| | |
|---|---|
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Ստորագրություն | Ստորագրություն |

Digitally signed by ALEKSANYAN LIANNA
6803890619

Scanned with CamScanner